ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/42

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից 20.05.2022թ. ներկայացված (23.05.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/42 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Իմպեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Իմպեքս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 20.05.2022թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) բժշկական պարագարների ձեռքբերման նպատակով ս/թ. ապրիլի 20-ին կազմակերպել է ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/18 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթին մասնակցել է նաև մեր կազմակերպությունը՝ «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով սահմանում է, որ «Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա

բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն «Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ՝ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»:

Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտեաբերված անհամապատասխանությունները»: Տվյալ դեպքում չեն պահպանվել Կարգի 41-րդ կետի պայմանները, մասնավորապես՝ մեր կազմակերպությանը չի տրվել շտկման հնարավորություն և գնահատող հանձնաժողովի կողմից մեր հայտը մերժվել է:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու որոշումը հաստատվել է ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/18 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 29-ի N 3 արձանագրությամբ, մինչդեռ վերջինս տեղեկագրում հրապարակվել է մայիսի 16-ին՝ 16 աշխատանքային օր ուշացմամբ:

Օրենքի 3-րդ կետը.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ պարտավորեցնել Պատվիրատուին և ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/18 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 2022 թվականի ապրիլի 29-ի N 3 արձանագրությամբ հաստատված «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու որոշումը, 2022 թվականի մայիսի 12-ի N 5 արձանագրությամբ որոշմամբ հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը պարտավորեցնելով ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/18 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման ծանուցում ներկայացնել «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին՝ պահպանելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.05.2022թ. ժամը 10:40-ին և 21.06.2022թ. ժամը 17:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 26.05.2022թ. թիվ 0543 գրությամբ բողոքի շրջանակներում հայտնել է հետևյալ գրավոր դիրքորոշումը.

««Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 20.04.2022թ. հրապարակվել է ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/18 ծածկագրով բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել նաև «Իմպեքս» ՍՊԸ-ն 1-ին-արյան հոսքային գիծ, 7-րդ-16G զարկերակային ֆիստուլային ասեղներ և 8-րդ-16G երակային ֆիստուլային ասեղներ չափաբաժինների մասով: 29.04.2022թ. գնահատող հանձնաժողովի

փաստաթղթերի գնահատման N 3 նիստում գնահատող հանձնաժողովը ընկերության հայտում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունը՝

«Իմպեքս» ՍՊԸ-ի հայտի մեջ ներառված փաստաթղթերը (Հավելված N 1, Հավելված 1.1, Հավելված 1.3, Հավելված 2) հաստատված չեն ընկիերության լիազորված անձի ստորագրությամբ և կնիքով, ինչպես նաև էլեկտրոնային ստորագրությամբ, բացառությամբ մասնակցի կողմից ներկայացված լիազորագրի (կից ներկայացնում ենք «Իմպեքս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը):

Մասնակցի կողմից գնային առաջարկը հաստատված չլինելու կապակցությամբ և հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Իմպեքս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Հարկ ենք համարում նշել, որ հանձնաժողովը անհամապատասխանությունը շտկելու պահանջով չի դիմել մասնակցին, քանի որ էլեկտրոնային ստորագրությունից բացի ներկայացված փաստաթղթերում բացակայել են լիազորված անձի ստորագրությունները և կնիքը (դրանք չեն հաստատվել մասնակցի կողմից):

Ի լրումն վերը նշված դիրքորոշման՝ Պատվիրատուն 02.06.2022թ. թիվ 0572 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն սույն թվականի մայիսի 26-ի N 0543 գրության՝ պարզաբանում ենք, որ Կարգի 41-րդ կետում նշված «հաստատված փաստաթղթեր» հասկացությունը իրավական տեսանկյունից մեկնաբանվում է որպես փաստաթղթի վրա լիազորված անձի կողմից ստորագրություն դրված լինելը: Ընդհանուր առմամբ անձի կողմից որևէ փաստաթղթի հաստատումը նշանակում է, որ դրանում նշված բովանդակությունը բխում է նրա կամքից: Ստորագրություն դնելով փաստաթղթում շարադրվածը ստանում է անձի կամքի դրսևորման հավաստում և դառնում ապացույց:

Օրինակ՝ նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատումը կատարվում է ստորագրություն և կնիք դնելով:

Իրավաբանական անձի դեպքում՝ փաստաթղթերը հաստատվում են գործադիր մարմնի ղեկավարի կողմից ստորագրություն և կնիք դնելով, եթե իրավաբանական անձն ունի կնիք: Հիմք ընդունելով ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/18 ծածկագրով ընթացակարգի 20.04.2022թ. հրապարակված հրավերի 4.3 կետի 3-րդ և 8.4 ենթակետերը, ինչպես նաև Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և 41-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մերժեց «Իմպեքս» ՍՊԸ-ի հայտը»:

Հարկ եմ համարում նաև նշել, որ ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի N 1317-Ն որոշման համաձայն՝ դիալիզի ապրանքները ազատված են ավելացված արժեքի հարկից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.05.2022թ. ժամը 10:40-ին և 21.06.2022թ. ժամը 17:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2022/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Իմպեքս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ և որոշում կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Իմպեքս» ՍՊԸ-ի 20.05.2022թ. բողոքը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 26.05.2022թ. թիվ 0543 և 02.06.2022թ. թիվ 0572 գրությունները, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: ***Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:***

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում է յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***<u>մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ</u>***:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն

իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային

թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ***<u>Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ</u>***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9 ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ***<u>ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ,</u>*** հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

(…)

Նույն կետի 8.18 ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը)

ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

Կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը,*** որոնցում բացակայում է ***գնային առաջարկը***, կամ եթե այն **ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան**, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը,*** որոնցում բացակայում է ***գնային առաջարկները*** կամ դրանք ***ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ***մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը*** կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպես, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Իմպեքս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ և որոշում կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

Ուսումնասիրելով Ընթացակարգին Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Ընկերության ներկայացրած հայտում առկա փաստաթղթերը, մասնավորապես՝ գնային առաջարկը, արձանագրում եմ, որ այն հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այսինքն՝ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 29.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժելով Ընկերության հայտը, գործել է Կարգի 40-րդ կետի 4-րդ և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետերով սահմանված պահանջների պահպանմամբ, հետևաբար գտնում եմ, որ «Իմպեքս» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմք ներկայացրած Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջին, ապա Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի, Կարգի 41-րդ կետի և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համակարգային վերլուծության արդյունքում արձանագրում եմ հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ (...) ***<u>Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ</u>***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>հանձնաժողովը մերժում է այն հայտերը,</u>*** որոնցում բացակայում է ***<u>գնային առաջարկը</u>***, կամ եթե այն **<u>ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան</u>**, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ***<u>մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը</u>*** կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հետևաբար Ընթացակարգին հայտ ներկայացրած ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատեին էլեկտրոնային թվային ստորագրությամբ, մինչդեռ «Իմպեքս» ՍՊԸ-ի հայտում ներառվող՝ իր կողմից հաստատվող փաստաթղթերից, մասնավորապես՝ թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը, հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Վերոնշվածը, համադրելով Կարգի 41-րդ կետով և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջների հետ, արձանագրում եմ, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ Կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի, այն է՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, այն դեպքում, երբ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում

մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն, երբ հայտում ներառված՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ***մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը*** կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այսինքն՝ մասնակցի կողմից ***հաստատված*** գնային առաջարկը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չլինելու պայմաններում է միայն գնահատող հանձնաժողովը վերջինիս ծանուցում՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը. քննարկվող դեպքում «Իմպեքս» ՍՊԸ-ն, հանդիսանալով ՀՀ ռեզիդենտ, Ընթացակարգին ներկայացրած գնային առաջարկը, (ստորև ներկայացվում է) բացի այն, որ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այն նաև հաստատված չէ իր կողմից, որպիսի պայմաններում Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթը կիրառելի չէ:

Հավելված 2
«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/18 ծածկագրով
գնանշման հարցում մրցույթի հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Արյան հոսքային գիծ	**11960000** Տասնմեկ միլիոն ինը հարյուր վաթսուն հազար	**2392000** Երկու միլիոն երեք հարյուր իննսուներկու հազար	**14352000** Տասնչորս միլիոն երեք հարյուր հիսուներկու հազար
7	Ֆիստուլային ասեղներ 16G զարկերակային	**1233333.33** Մեկ միլիոն երկու հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական	**246666.67** Երկու հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական	**1480000** Մեկ միլիոն չորս հարյուր ութսուն հազար
8	Ֆիստուլային ասեղներ 16G երակային	**1233333.33** Մեկ միլիոն երկու հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական	**246666.67** Երկու հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական	**1480000** Մեկ միլիոն չորս հարյուր ութսուն հազար

«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Շախնազարյան _____

Կ. Տ.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից 20.05.2022թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**